

այսպէս անուանեց թորոս զթովմաս՝ իր իշխանաց առջև. և յետ զամեն բան յանձնելու և կտակելու, մնացեալ մտածութիւնն ալ դարձուց բոլոր իր հանգերձեալ կենաց. կրօնաւորական հագուստ բերել և օրհնել տուաւ, և այն խոնարհ ձեով ցուցուց յետին օրերուն թէ ուր կը վերջանան այնքան կիրք և կուիւք: Մարմինը փառօք թաղեցին ի Դրազարկ վանքը, զոր իր հօրեղբայրն թորոս Ա շինեւ էր, և հոն հանգչէր. ուր որ յետոյ շատ թագաւորք և թագուհիք Հայոց ալ հանգուցան:

Թորոս քաջութեան պէս բարեպաշտութեան և զգոնութեան ալ մեծ համբաւ ունէր, և գերադոյն աստիճանի մը, եթէ լսենք Վահրամայ Բ. բունոյ:

« Էր սա մարմնով յառաջացեալ,
Այլ և հոգւով յոյժ զօրացեալ.
Զողորմութիւն առատ տըւեալ,
Ստ արեգական լուսոյ փայլեալ.
Բարեաց գործովք բարգաւաճեալ,
Եւ հաւատով պայծառացեալ.
Աստուածային գրքովք վարժեալ,
Եւ յիմաստից արուեստ մըտեալ:
Ասէն, հոգի սա ընկալեալ
Մարգարէի հաւասարեալ,
Որով գրժուար բանըս լուծեալ,
Որ գըտանի այժմըս գըրեալ:
Յամենայնի փառազարդեալ,
Եւ յԱստուծոյ հաճոյս կացեալ »:

Իցի՛ւ թէ և մեր ժամանակին այժմըն ալ մնացեալ ըլլային այդպիսի թրաթափ հեղինակի մը մեկնաբանութիւնք, և զինուց գծածին հետ գրչի գծածքն ալ բաղդատէինք. որոց հետ փափագելի էր իր գործոց հաւաստագոյն պատմութիւնն կամ ժամանակագրութիւնն ալ գտնել, որով իր ժամանակին դիւցազանց ո՛ր դիրքը դնելնիս աւելի կը ստուգէինք: Առ այժմ՝ ոչ միայն ազգայնութեան սիրով, այլ և ժամանակակից և յետագայ թէ արեւմտեան և թէ արեւելեան պատմչաց վկայութեամբք՝ չենք զանգիտեր առաջին տեղը տալու, միշտ քաջութեան հետ՝ խոհեմութիւնն ալ դիտելով, որով հաւասար ահաւոր և սիրելի եղած և ըսուած էր:

Հ. Ղ. Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՏԱՂ.

Ի ԾԱՂԿԱԶԱՐԴՆ

Այսօր ցընծան արարածք
Բախճանապէս օրհնութեամբ.
Երկինք և՛ երկիր պար առեալ
Մափ ըզծափի հարկանեն:
Հոյք ամենայն կենդանեաց
Վերնակառիցըն բնութեանց.
Նոյն և մարգկան պետութեանց
Հանգերձ ստորայնոցըն դասուց:
Գարնանաշարժ յարութեամբ
Որոտընդոստ արթնութեամբ.
Ծով իւր ալեօքըն ծովայր
Կարկաջահոս վըտակօք:
Այսօր ի լեառըն Սիոնի
Նարդոսն ըզհոտ իւր ցընդեաց.
Վարդ վառ ի վառ երփն ի գոյն
Եւ ծիրանի մանիշակ:
Լեառըն ցընծայ Զիթենեաց
Ծառք և ծաղկունք և շուշանք,
ԸզՄեսիայն օրհնէին
Փոքրիկ հօտին Պետրոսի:
Յընծայ հըրճուի բուրաստան
Երուսաղէմըն քաղաք.
Ելեալք ընդդէմ օրհնէին
Այն որ փրկեացըն զԱդամ:
Փողով հընչմամբ օրհնութեամբ
Ոսկիաձոյլ բաղձանօք,
Արծաթափայլ սուրբ սըրտիւ
Զմէր կենարարն օրհնեսցուք:
Օրհնեալ որ դաս թագաւոր
Որդի Դաւթի հօր մերոյ.
Խաղաղութիւն ի յերկինս
Փառք ի բարձունս Աստուծոյ: